



**ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ**



ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

Հայաստան, 0025, Երևան, Կորյունի փ. 2, հեռ.

060621238, 2-38, ss@ysmu.am

**«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 30-Ի ԹԻՎ 7 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏՈՒՄ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԸՆԴՊԻՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 1407-Ն որոշմամբ հաստատված «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) կանոնադրության 55-րդ կետի 10-րդ, 12-րդ ենթակետերը.

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Մեծ ավանդի, բարեխիղճ, անմնացորդ և երկարամյա աշխատանքի համար Ֆելիքս Ասրանազի Կարապետյանին պարգևատրել «Հերացի» ոսկե հուշամեդալով (22-06-07-01).
2. Հաստատել՝ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի արտաքին կապերի զարգացման և միջազգայնացման քաղաքականությունը 2022- 2028 թթ.» ծրագիրը (կցվում է) (22-06-07-02).
3. Հաստատել «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի «Ռազմաբժշկական ֆակուլտետի պետի և դասախոսների մրցութային ընտրության առանձնահատուկ պայմանների մասին» կանոնակարգի փոփոխությունները՝ նոր խմբագրությամբ (կցվում է) (22-06-07-03).
4. Հաստատել «Ընդհանուր բժշկական գործունեություն զինված ուժերում» մասնագիտությամբ ինտերնատուրայում ուսումնառության համար տիպային ուսումնական պլան-ծրագիրը (22-06-07-04).
5. Հաշվի առնելով Մանկաբարձության և գինեկոլոգիայի թիվ 1, Ֆարմացիայի, Ակնաբուժության, Դեղագործության կառավարման, Ֆթիզիատրիայի, Ընտանեկան բժշկության, Ինֆեկցիոն հիվանդությունների ամբիոնների վարիչների և պրոֆեսորների ընտրության հաշվիչ հանձնաժողովի նախագահի առաջարկումը,



հաստատել ընտրությունների հետևյալ արդյունքները՝

- 1) որպես մանկաբարձության և գինեկոլոգիայի թիվ 1 ամբիոնի վարիչ ընտրված համարել Արմինե Գագիկի Հարությունյանին (22-06-07-05).
 - 2) որպես ֆարմացիայի ամբիոնի վարիչ ընտրված համարել Արուսյակ Գագիկի Ժամհարյանին (22-06-07-06).
 - 3) որպես ակնաբուժության ամբիոնի վարիչ ընտրված համարել Լիլիթ Ալբերտի Ոսկանյանին (22-06-07-07).
 - 4) որպես դեղագործության կառավարման ամբիոնի վարիչ ընտրված համարել Մարթա Հեկտորի Սիմոնյանին (22-06-07-08).
 - 5) որպես ինֆեկցիոն հիվանդությունների ամբիոնի վարիչ ընտրված համարել Վիգեն Արայի Ասոյանին (22-06-07-09).
 - 6) որպես ֆթիզիատրիայի ամբիոնի վարիչ ընտրված համարել Մարինա Դմիտրիի Սաֆարյանին (22-06-07-10).
 - 7) որպես ընտանեկան բժշկության ամբիոնի վարիչ ընտրված համարել Միքայել Զախարի Նարիմանյանին (22-06-07-11).
 - 8) որպես մանկաբարձության և գինեկոլոգիայի թիվ 1 ամբիոնի պրոֆեսոր ընտրված համարել Սյուզաննա Ռուբենի Բաբլոյանին (22-06-07-12).
 - 9) որպես ֆարմացիայի ամբիոնի պրոֆեսոր ընտրված համարել Կարինե Սերյոժայի Մարգարյանին (22-06-07-13).
 - 10) որպես ինֆեկցիոն հիվանդությունների ամբիոնի պրոֆեսոր ընտրված համարել Նաիրա Մարտունի Գյուլագյանին (22-06-07-14).
 - 11) որպես դեղագործության կառավարման ամբիոնի պրոֆեսոր ընտրված համարել Մարգարիտ Հրանտի Բեգլարյանին (22-06-07-15).
 - 12) որպես ակնաբուժության ամբիոնի պրոֆեսոր ընտրված համարել Մարինե Լևոնի Շահսուվարյանին (22-06-07-16).
 - 13) ակնաբուժության ամբիոնի պրոֆեսորի թափուր տեղի համար հայտարարված մրցույթում Աննա Վիկտորի Հովակիմյանի և Արմեն Հրաչիկի Վարդանյանի կողմից հավասար ծայներ հավաքելու հիմքով գիտական խորհրդի հաջորդ նիստում անցկացնել կրկնակի քվեարկություն՝ ղեկավարվելով գիտական խորհրդի 2013 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 11 որոշմամբ հաստատված Ամբիոնների և դասախոսական կազմի մասին կանոնակարգի 26-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով (22-06-07-17).
6. Որոշումների կատարման հսկողությունը հանձնարարել ռեկտոր, պրոֆեսոր Ա.Ա.Մուրադյանին:

ՆԱԽԱԳԱՀ՝

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ՝



Բ.Գ.Դ. ՊՐՈՖ. Ա. Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Բ.Գ.Դ. ՊՐՈՖ. Տ. Գ. ԱՎԱԳՅԱՆ